

Հաւանական է, որ երկու արձանագրութիւնում էլ յիշատակուած է միեւնոյն անձը, եւ վարդապետ Խաչատուրը՝ միայնակենցաղ հոգեւորականներից է:

Ըստ Գ. Յովսէփեանի՝ բերդապարիսպի հիմնապատերի շարուածքն առնչուած է Վանի թագաւորութեան ժամանակներին («Ուրարտական շրջանի գործ է»): Իսկ Ս. Բարխուդարեանն այն կարծիքն է յայտնում, որ քարգործ տէր Մանուէլի եւ տէր Յովհաննէսի գործերն են ոչ միայն բերդապարիսպի քանդակները, «այլեւ, հաւանաբար, յիշուած եկեղեցու եւ բերդի վերին, նոր մասերի շինարարութիւնը»⁹: Ս. Սաղումեանը, չմերժելով Գ. Յովսէփեանի կարծիքը՝ ամրոցի հիմքերի վաղ լինելու վերաբերեալ, համաձայնում է նաեւ Ս. Բարխուդարեանի հետ, թէ վերոյիշեալ արձանագրութիւնները նոր շինութեան կառուցման ու աւարտի թուականներն են: Եկեղեցու կառուցող ճարտարապետների մասին մենք որեւէ տեղեկութիւն չունենք: Ինչ վերաբերում է ամրոցի «նոր մասերի շինարարութեանը», ապա նրա կառուցող քարգործ վարդապետը միայնակեաց Խաչատուրն է: Վերջինիս են պատկանում նաեւ պարսպի վրայ գտնուող բոլոր արձանագրութիւնները եւ փակագրերը, որոնք աչքի են ընկնում կատարողական բարձր արուեստով եւ վայելչագրութեամբ:

Մեր կարծիքով՝ «ամրոցը» չէր կարող կառուցուել Վանի թագաւորութեան ժամանակաշրջանում, քանի որ քարերի մշակման ձեւը չի համապատասխանում բիւսանական ճարտարապետութեանը բնորոշ առանձնայատկութիւններին: Բացի այդ, շինութիւնը, որպէս պաշտպանական համալիր՝ ամրոց, բերդ, զուրկ է տուեալ ժամանակաշրջանին բնորոշ ռազմական կառոյցներին անհրաժեշտ պարտադիր տարրերից՝ երկտակ պատերի լայնութիւնից, կոնտրֆորսներից, աշտարակներից¹⁰: Հարկ ենք համարում նշել նաեւ, որ յու-

շարձանի տարածքում սփռուած մեծաքանակ խեցանօթների բեկորների մէջ Ք. ա. XII-XIII դդ. վաղ նիւթական մշակոյթի ոչ մի նմուշ չի յայտնաբերուել: Ամենայն հաւանականութեամբ, տուեալ կառոյցը լոկ վանական միաբանութեան սովորական պարիսպ է եւ հիմնադրուել է 1488 թ. վարդապետ Խաչատուրի կողմից:

Գորշակարմրաւուն մեծ տուֆէ երկփեղկուած քարի բեկորներին փորագրուած է չորս ու կէս տող արձանագրութիւն, որի առանձին հատուածներ անընթեռնելի են: Երկրորդ բեկորին փորագրուած է թուակաւորը, որը չի կապուած նախորդ գրութեան հետ: Առաջին բեկորին փորագրուած է. [Կ]ԱՄԱԻՆ ՄԱՐԴՈ ՍՐ.../ ԱՐՄԷԾՄԷՎՍ / [Ա]ԽԵՑԻ ԾԱ/ՌԱ ԱՅ: Արձանագրութեան վերծանութիւնը սկսենք վերջից. Ծառա Աստուծոյ՝ ինքնուրոյն իմաստ արտայայտող բառեր են: ԽԵՑԻ տառաշարքը տեղանուան վերջնամաս է, ինչպէս՝ տեղեկոցի (դ/ս հերթագայութեամբ): Առինջի XII դ. մատուռ-եկեղեցու շրջակայքում գտնուող հարթ տապանաքարի թերի արձանագրութեան համաձայն կարելի է վերականգնել տեղանուանումը, այն է՝ [Ա]խեցի> Աղ[ծ] եցի> Աղց: Հաւանական է, որ ԱՐՄԷՇՄԷՎՍ տառաշարքից ՇՄԷՎՍ-ն անձնանուն է՝ ՇՄԷՎ[ՈՆԻ]Ս - Շմաւոն: Աւանդուած օրինակը ցոյց է տալիս, որ է (ալ/է) հնչիւնի առկայութիւնը պատահական վրիպում կամ փորագրողի սխալ չի կարող լինել. այն, հաւանական է, տուեալ ժամանակաշրջանում տեղական խօսուածքի արտայայտութիւն է, ինչպէս Ագուլիսի բարբառում՝ տայր-տէր, պայտք-պէտք¹¹: [Կ]ԱՄԱԻՆ ՄԱՐԴՈ արտայայտութիւնն արձանագրութեան սովորական սկիզբ է (փորագրողը հաւանաբար բառասկզբում մոռացել է Կ հնչիւնը), որը վկայուած է Անիի գլխաւոր դարպասի արձանագրութեան մէջ՝ Գրուքեամբն մարդասիրի¹²: Այսպիսով, բնագիրը կ'ունենայ հետեւեալ տեսքը. [Կ]ԱՄԱԻՆ ՄԱՐԴՈ, ՍՐ.../ ԱՐՄ

Է ԾՄԷՎ[ՈՆԻ]Ս / [Ա]ԽԵՑԻ ԾԱ/ՌԱ Ա[ՍՏՈՒՇՈ]Յ:

Երկրորդ բեկորին իրար տակ փորագրուած է թուակաւոր. Թ[Վ] Ջ/Ս/Ը/ (1500) ԱՎԱՆ / ՎԻՃ[Ա]Կ / [Ե]Ց[Ա]Բ ՍՄ[Ա]: Աւան բառը դժուար է պնդել՝ անձանուն է, թէ՞ տեղանուն, թէեւ մերձակայքում է գտնուած պատմական Աւան գիւղը: Հր. Աճառեանը Աւան արական անձնանունը (յիշուած է 1590 թ.) համարում է Յովհաննէս անուան գաւառական ձեւը (կայ նաեւ Աւանէս)¹³: Նմանատիպ քարի վրայ փորագրուած է երեք տող վայելչագրութեամբ արձանագրութիւն, որը թերի է. ԶԲՐԻՍՏՈՍ ՏՈՒ... ԱՂԱ ՆՈՐԱԳԱԻԹՈՅ ՅԻՇԵՏԷՔ Ի ՔՍ:

Արեւելեան պատի մօտ՝ տեղաշարժուած տուֆէ մեծ քարերի վրայ, կան մի քանի մեծ չափերի գեղազիր փակագրեր¹⁴:

Պարսպի կենտրոնում տեղացիների կողմից Ս. Աստուածածին անուանուած եկեղեցին է: Արեւմուտքից եկեղեցուն կցուած է պեղումներով վերջերս բացուած, այսպէս կոչուած, գաւիթը, որի ծածկը եղել է փայտից: Այդ են վկայում մշակուած քարէ երկու փոքրիկ խարիսխները: Այն արտաքուստ պայտածեւ է, ներքուստ՝ քառակուսի փոքրիկ բեմով, խարիսխուած կոպտատաշ պատերով, մուտքը՝ արեւմուտքից: Եկեղեցու երկու կողմերից ամրութեան նպատակով XVII-XVIII դդ. կառուցուել է հողէ պատերով պայտածեւ մի շինութիւն: Եկեղեցու մուտքի դիմաց կան երկու հարթ տապանաքարեր, որոնցից մէկն ունի խորադիր գեղաքանդակ խաչ: Շքամուտքին առանձնայատուկ տեսք տուող երկու մեծ սրբատաշ քարերը, որոնք դրուած են հարթ գոյգ տապանաքարերի վրայ, յիշեցնում են անցեալի երբեմնի գեղեցկութեան մասին: Մուտքի աջ ու ձախ կողմերում պատի մէջ, ագուցուել են մեծ խաչքարեր, որոնք քայքայուած եւ հողմայարուած վիճակում են: Բեմը եւ յատակը տեղ-տեղ

սալապատուած են: Գլխաւոր խորանը աչքի է ընկնում կենտրոնում նուրբ մշակուած գրակալով: Հաւանական է, որ շքամուտքի՝ մշակուած գոյգ քարերը եւ բեմի աջ ու ձախ կողմերի անկիւնածեւ սրբատաշ քարերը իրենց նախնական տեղում են: Մաքրման աշխատանքներից դուրս եկած բազմաթիւ մշակուած քարերից դատելով՝ կարելի է եզրակացնել, որ եկեղեցին նախկինում եղել է սրբատաշ, գեղեցիկ, քանդակագարդ շինութիւն:

Ամրոցից 300 մ հիւսիս-արեւելք՝ բլրալանջի հարթակի վրայ, կայ կիսաւեր փոքրիկ մատուռ-եկեղեցի, որը բնակիչներն անուանում են Կարմիր եղջի: Դատելով իր ճարտարապետական յորինուածքից՝ շինութիւնը, հաւանաբար, կառուցուել է XII-XIII դարերում: Մատուռ-եկեղեցու արձանագրութիւնները հրատարակուած են առաջին անգամ: Եկեղեցու հարաւային պատին արտաքուստ քանդակուած են նրբահիւս զարդամոտիւններով բազմաթիւ խաչեր: Առաջին խաչապատկերի արձանագրութիւնը հետեւեալն է. ՄԲ ԽԱՉՍ ԲԱՐԵՍԱԻ[Ս] Է: Երկրորդը նախորդի կողքին է. խաչերի մէջ գրուած է. ՈՒՄ/ ԵԿ/ ԻՆ: Սրանից մի փոքր ներքեւ առկայ է. ԳՐ[ԻՉ] / ԱՄԵՆ: Հաւանաբար, ԳՐ պէտք է վերծանել գրիչ, այսինքն՝ Ումէկ գրիչը փորագրողն է: Եկեղեցու հարաւային պատին յենուած խաչքար կայ՝ քիւրին մէկ տող եղծուած արձանագրութիւն՝ կազմողի անուան մակագրութեամբ. ՄԲ ԽԱՉՍ ԲԱՐԵՍԱԻՍ... ՅԱԿՈՒ. ԹՎ. ՌԾ (1601): Եկեղեցու արեւմտեան մասում կայ խաչքար՝ պատուանդանի մէջ, վերելից կոտորուած: Իր յորինուածքով խաչքարը բաժանուած է մի քանի մասերի. տարբեր չափերի գեղաքանդակ փոքր խաչերի մէջ կայ մէկ տող եղծուած արձանագրութիւն՝ ԱՄՈՒՍԻՆ ԻԻՐ ԽԱՆԱՂԻՆ, իսկ խաչքարի ներքեւի հատուածում եւս մէկ տող՝ ԹԷՉԱԳՈՒԼԻՆ անունով: Դժուար է պնդել, թէ վերջինս խաչքարի կազմողն է:

լեալ էր Յակոբ վարդապետ Առնշեցի ի Պոդոս վարդապետէ, եւ իմ գնացեալ թվին ՌԾԵ (1606)»²⁷:

Առինջի Ս. Աստուածածին վանքի սպասաւոր 77-ամեայ Յակոբ վարդապետը 1626 թ. օրինակում է մի Աւետարան եւ այն նուիրում Ս. Մարիամ Աստուածածնին, Ս. Ստեփանոս Նախավկային: Յիշատակարանը հետաքրքիր է մի շարք առումներով: Նախ՝ անէծքի հատուածում նուիրատուն առանձնակի շեշտում եւ զգուշացնում է, որ նուիրուած իրը «ոչ ոք չունի հրաման եւ իշխանութիւն հեռացուցանել Ս. Աստուածածնէս կամ գրաւ դնելով կամ ծախելով կամ իմ ու քո ասելով»: Երկրորդ՝ նուիրատուութեան օրեւէ խօսք չի գնում միւս վանքի՝ Ս. Ստեփանոս Նախավկայի մասին: Եւ երրորդ՝ վանքը համարում է առաջնորդարան, ուր նստում էր Յովհաննէս արքեպիսկոպոսը. «Անխափան կարգան զմեր յիշատակին, Յովհաննէս արքեպիսկոպոսն, որ վերակացու է վանիցս եւ առաջնորդ»²⁸: Համաձայն յիշատակարանի՝ Առինջի Ս. Աստուածածնում էին պահուած մի շարք սրբերի մասունքներ. «Գրեցաւ ի թվաբերութեանս ՌՀԵ (1626) ի յերկիրս Արարատայ ի գիւղս, որ կոչի Առինջք ի վանս Ս. Մարիամ Աստուածածին, եւ այլ սրբոցս, որ աստ կան հաւաքեալ սբ. Ստեփանոս, սբ. Սիոն, սբ. Ծիրան եւ սբ. Յակոբ»²⁹:

1650 թ. գրիչ Մարտիրոսի կողմից Առինջի Ս. Աստուածածնում ընդօրինակուած «Վարք Հարանց»-ի վերջին յիշատակարանից իմանում ենք, որ գիւղն ունեցել է կուսանաց անապատ: Վերոյիշեալ յիշատակարանը օրինակուել է վերջինիս համար հանգանակուած միջոցներով. «գրեցաւ սա ի գեղ Առնշու ի դուռն Ս. Աստուածածնի, ի գումարս կուսան կանանց»³⁰:

1654 թ. Առինջում ընդօրինակուած ձեռագրի յիշատակարանի համաձայն՝ «գրեցաւ Սբ. Աւետարանս, ի գիւղն Ա-

ռինջ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, ի բարձրադիտակ տողւոջ ի մեծ թվականին Հայոց ի ՌՃԳ (1654)»³¹: Այս վկայութիւնը հաստատում է նշուած եկեղեցու անուանումը:

1679 թ. մեծ երկրաշարժը աղետալի աւերածութիւններ է ունեցել գիւղում՝ կործանելով ճարտարապետական հոյակապ շինութիւններ եւ խլելով բազմաթիւ բնակիչների կեանքը: Ստորեւ ներկայացնում ենք հին գերեզմանատանը գտնուող վիմագիր յուշարձանները, որոնք սփռուած են ամբողջ հնավայրում:

1. Ամբողջական խաչքար՝ կանգնած վիճակում, քիւրն մէկ տող արձանագրութիւն.

Ս[ՈՒՐ]Բ ԽԱԶՍ ԲԱՐԵԽԱԻՍ Է ՈՒՀԱՆԻՆ: ԹՎ. Ռ (1551): ՏԷՐ ՍՏԵՓԱՆՈՍ ԿԱԶ[ՄՈ]Ղ:

2. Մեծ խաչքար՝ կանգնած պատուանդանին, չորս տող արձանագրութիւն.

Ի ԹՎ.: ՈԼ: (1181) ԱՅՍ [Է] ՀԱՆԳԻՍՏ/Ս ԳՐԻԳՈՐՈ ՔԱՀԱՆԱԻ, ԱՂԱՉԵՄՔ

ՅԻՇԵՍԶԻՔ Տ[Է]Ր ՍԱՐԿԱԻԱԳ ԳՐԻԶ:³²

3. Խաչքար՝ պատուանդանի վրայ կանգնած, Տիրամօր պատկերով:

4. Խաչքար՝ գետնին ընկած, մէջտեղից կտրուած, քիւրն մէկ տող արձանագրութեամբ.

Ս[ՈՒՐ]Բ ԽԱԶՍ ԲԱՐԵԽԱԻՍ Է ԾԱՐԻՆ ԵՒ ՄՈՍ[Ի]Ն ԵՒ ՈՐԴԻ[ՈՅ] ՍԱՐԳՍԻՆ...:

5. Հինգ խաչեր՝ իրար կողքի, պատուանդանի վրայ կանգնած, նրանցից մէկը ունի տասը տող արձանագրութիւն.

Յ[ԻՍՈՒ]Ս Ք[ՐԻՍՏՈ]Ս/ ՈՇ Ե[Ի] Թ. (1209) Թ[Վ]. /ԵՍ ԱԻԵՏԻՍ/ ՄԵՇ ՅՈՒՍՈՎ/ ԿԱՆ[ԳՆ]ԷՅԻ ԶԳԵՐԱՎՐԱ /ՍՈՒՐԲ ՆՇԱՆԻՍ ԲԱՐԷ[Ս]ԱԻՍՈ[Ի]Թ[ԵԱ]Ն ՀՈԳՈ ՆՐՃԸՍԻ ԱՄ/ ՈՒՍՆՈ ԻՄՈ ԵՒ գաւա-

կաց իմոց տիրԱԻՍ ԳԻԹ Սա ՔՍ Ի/ ԳԳՐԻԳՈՐ ԵՒ զՄԻՍԻԹԱՐԱՆ»./ յիշեալիք զկագմող գտող սոցա աղաչեմ: (Պատկեր 1):

Չորրորդ խաչքարը իր պատուանդանով աւելացուել է երեք խաչերի պատուանդաններին, որոնք աւարտուած են գլանաձեւ զարդամոտիւով:

Վիմագիրը փորագրուած է մեծատառերով եւ փոքրատառերով՝ յաճախ էլ շեղագրութեամբ: Նրջիս-Նրճրս-Նրջիս-Նճիս անձնանունը դրուած է աստղանիշով, ունի արաբական ծագում, նշանակում է Ասրգիգ, ծաղիկ: «Նրջիսը չորրորդ դուստրն էր Մեծն Սարգսի, քոյրը Զաքարիա ամիրսպասալարի եւ Իւանէ աթաբէգի, հաւանօրէն Դսեղի Մամիկոնեանց հարսն էր: Նրջհիս-քոյր պատրոն Զաքարիայի եւ Իւանէի, ինքն էլ կոչուած է պատրոն: Եղել է ճգնաւոր եւ թաղուել է Սանահինում: Նճիս յայտնի է Մրէնում կանգնեցուած մի անթուակիր խաչքարի արձանագրութիւնից»³³:

6. Խաչքար՝ հնգաստիճան պատուանդանին, նախորդից մի փոքր հարաւ-արեւելք, քիւր ներքեւի մասում՝ երեք տող արձանագրութիւն.

Ի ԹՎԻՍ: ԶԺԵ: (1266), ԵՍ ՍԱՍԳՈՐ ԿԱՆԿՆԵՑԱԻ ԶԽԱԶՍ Ի ԲԱՐԵԽԱԻՍՈՒԹԻ ՄԵԶ ԵՒ ԾՆՈՂԱՅ ՄԵՐՈՅՍ: Խաչքարի արեւելեան կողին գրիչը շարունակել է ԵՐԿՐՊԱԳԷՔ, ԱՂԱԻԹՍ ՅԻՇԵՑԷՔ:

7. Խաչքար՝ պատուանդանին կանգնած, ծաղկազարդ թուականը փորագրուած է խաչի ուղղահայեաց հատուածին: Քիւրից ներքեւ՝ մէկ տող ծաղկազարդ արձանագրութիւն.

ԱՐՂՈՒԹԷՍ Է ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՄ, ԹՎ. ԶԺ (1461)³⁴:

8. Մեծ խաչքար՝ պատուանդանին, նախորդից 2 մ առաջ, քիւրն երկու տող արձանագրութիւն, խաչի վերին մասում՝ թուականը.

ԿԱՆԳՆԵՑԱԻ Խ[Ա]ԶՍ Ի ԲԱՐԵԽԱԻՍՈՒԹԻ ԽՈՑԱԴԵՂԻՆ: Կ[Ա]ԶՄ[Ո]Ղ Ա[ՍՏՈՒԱ]ԾԱՏՈՒՐ: Խաչի հարաւային հարթութեան վրայ ունի. ԵՒ ԾՆՈՂԱՅ ԻՒՐ ՅԻՇԵ[Ն]Ց[Է]Ք: ԹՎ. ՊՀԳ. (1424)³⁵:

9. Իրար կողքի հինգ խաչեր՝ նախորդից մի փոքր առաջ, հարաւ-արեւմուտք, երեք խաչերի վրայ կան արձանագրութիւններ.

1. Ս[ՈՒՐ]Բ ԽԱԶՍ ԲԱՐԵԽԱԻՍ Է ԾՀՐԱՆԻՆ ԵՒ ԳԱԻԶԱԼԻՆ ՈՐԴ[Ո]Յ: ԹՎ. ՌԿԴ (1615): (Պատկեր 2):

2. Խաչքարի քիւրն գրուած արձանագրութիւնը ամբողջական չէ.

Ս[ՈՒՐ]Բ ԽԱԶՍ ԲԱՐԵԽԱԻՍ Է ԳՈՒԼԽԱ[ՆԻՆ]: Խաչի շուրջը փորագրուած է կազմողի անունը՝ Գ/Ա/Լ/ ՈՒՍ/Տ Կ/ԱԶՄ/ՂՍ ՅԻՇԵՑԷՔ:

10. Իրար կողքի կանգնած հինգ խաչքարեր տարբեր չափերի, սրանցից մէկն ունի յիշատակագրութիւն, որը փորագրուած է խաչարձանի ներքեւի մասում եւ եղծուած է.

Ս[ՈՒՐ]Բ. ԽԱԶՍ ԲԱՐԵԽԱԻՍ Է ԴԷՄ...ՐԻՆ ԵՒ ՀԷՐԱՆՊԵՏ[ԻՐ]: ԹՎ :ՁԸ: (1460) /ՄԵՔ ՎԱՐԴՆ ՅԻՇԵՑԷՔ ՔՄ Յ[Ի]ՇԵՑԷՔ Ի] ՔՄ:

Հաւանաբար, անունը պէտք է կարդալ Դեմետր, «յիշեցէք ի Քրիստոս»: Վարդ քարգործը այն երկու անգամ է փորագրել, իսկ վերջին ՅԻՇ. ՔՄ արտայայտութիւնը նրբահիւս ու ծաղկազարդ է: Վարպետի ձեռքի գործն է նաեւ Զրվէժի XIII դ. խաչքարը, որը կանգնեցուած է ջրի վէճի առթիւ ոմն Խաչատուրի շիրմի վրայ³⁶:

11. Չորս մեծ խաչարձաններ՝ երեք պատուանդաններ յիշատակ, չորս տող արձանագրութիւն.

ա) Թվիս :Ո:Հ:Ա:(1222): ԿԱՄԱԻՆ ԱՅԵ[Ս] [ԳՐԻԳ]ՈՐ ՈՐԴՈՎՔ/ ՏՐՈՆԿԱԻ ԵՒ Մ...ԱԻ ԿԱՆԿԵՑԻ ԶԽԱԶ[Ս] / ԲԱՐԵԽԱԻ

ՍՈՒԹԻՒ] ԱՄՈՒՍ]ՆՈ ԻՄՈ ԽՈՐԱՍՈՒ ՈՅՔ ԵՐԿ[ՐՊԱԳԵՔ]/ ՅԻԾԵՍՁԻՔ Ի ՔԻ ԱՂԱՉԵՄ: (Պատկեր 3):

բ) ԿԱՄԱԻՆ ԱՅ, ԵՍ ԲԱՐՍԵՂՍ ԵՒ ՈՐԴԻՆ ԻՄ Ս[ՏԵՓ/Ա]ՆՆՈՍ Ս[Ր]ԲԱՍԷՐ ՔԱՀԱՆԱՅՔ ԿԱՆԿԵՑԱՅՔ/ ՉԽԱՉՍ Ի ԲԱՐԵՍԱԻ/ ՍՈՒԹԵԱ]Ն ՀԱԻՐ ԻՄՈ ՍԱՐԳՍԻ, ՈՅՔ ԵՐԿԻՐ ՊԱԳԱՆԷՔ ՅԱՂԱԻԹՍ ՅԻԾԵՑԷՔ ԹՎ : ՈԿԸ: (1220): (Պատկեր 4):

գ) Ի ԹՎԻՍ ՀԱՅՈՑ: ՈԿԸ: (1220) / ԵՍ ԲԱՐՍԵՂ ՔԱՀԱՆԱ ԵՒ ՈՐԴԻ ԻՄ ՍՏԵՓԱՆՆՈՍ ՊԱՏՎԱԿԱՆ ՔԱՀԱՆԱ ԿԱՆԿԵՑԱ/Ք ՉԽԱՉՍ ՉԱՅՍ Ի ԲԱՐԵ-ԽԱԻ-ՍՈՒԹԵԱՆ/ ԱՄՈՒՍՆՈ ԻՄՈ ՄԱՍՏՆԻՆ, ՈՅՔ ԷՐԿԻՐ ՊԱԳԱՆԷՔ ՅԱՂԱԻԹՍ ՅԻԾԵՑԷՔ ԱՂԱՉԵՄ: Խաչքարի հորիզոնական թեկերի տակ. Յ[ԻՍՈՒ]Ս Ք[ՐԻՍՏՈ]Ս / ՈՂՈՐ/ՄԵԱ / ՄԵՐ ՍՏԵ/ՓԱՆ /Ո/ՍԻ: (Տե՛ս պատկեր 5): 1214 թ. Բարսեղ անունով առաջնորդ է յիշատակում Այրիվանքում, որը, հաւանաբար, նոյն անձն է³⁷:

12. Խաչքար՝ պատուանդանին մէկ տող արձանագրութիւն.

Ս[ՈՒՐ]Բ ԽԱՉՍ ԲԱՐԵՍԱԻՍ Է ՄԻՀ- [ՐԱ]Ն ԵՒ ՉԱՐԱՆ, / ԵՂԱԻ ԸՆԾԱ Ա[Ս- ՏՈՒԱ]ԾԱՏ[ՈՒ]ՐԻՆ: ԹՎ ՋԴ (1455): (Պատկեր 6):

Ծանօթութիւն. Միհրան անունը գրիչը փորագրել Միշն ձեւով, ենթադրաբար վերծանել ենք Միհրան, քանի որ յապաւման նշանը դրուած է Ն-ի վրայ, Հ-ն փորագրուած է Շ-ի նման: Չարաւը կարելի է վերծանել Չարաւ-Չառ, նշանակում է դեղին, ոսկի³⁸:

14. Քիւրին կայ եղծուած մակագրութիւն.

Ս[ՈՒՐ]Բ ԽԱՉՍ ԲԱՐԵՍԱԻՍ ՄԻԽԻ- ԹԱՐԻՆ ...ԹՎ. ՋԺԷ (1468):

15. Խաչքար՝ միջին չափերի, արձանագրութիւնը՝ Ս[ՈՒՐ]Բ ԽԱՉՍ ԲԱՐԵՍԱԻՍ Է:

16. Մեծ խաչքարի երկու բեկորներ, քիւրին՝ արձանագրութիւն.

Ս[ՈՒՐ]Բ ԽԱՉՍ ԱԻԳՆԱԿԱՆ ԱՄԵՆԱՅՆ ԵՐԱԽՏԱԻՈՐԱՑ ՄԵՐՈՑ: Խաչքարի կենտրոնական մասում կցագիր փորագրուած է՝ ՄԵ[ԼԻ]ՔՍԻԷԴ ՅԻԾԵՑԷՔ: Սրանից ներքեւ՝ աջ ու ձախ մասերում, ծաղկազարդ նրբահիւս գրերով թուականը, կազմող բառը եւ քանդակագործի անունն տառերի որոշ մասը կոտորուած է. ԹՎԻՍ / ՊՂԷ (1448)/ ՋԳ[ՐԻԳ]/ ՈՐ/ ԿԱ/ ՉՄՈ / ՈՂ: Խաչ բառի մէջ Չ-ի փոխարէն գրիչը փորագրել է³⁹:

17. Մեծ խաչքար՝ կանգնեցուած պատուանդանին, քիւրին՝ մէկ տող արձանագրութիւն (խորադիր խաչի վերնամասում՝ աջ ու ձախ մասերին, փորագրուած է կազմողի անունը եւ թուականը). Ս[ՈՒՐ]Բ ԽԱՉՍ ԲԱՐԵՍԱԻՍ ԹՈՎՄԻՆ, ԱԾԷԻՇԻՆ, ՂՐԻՄԻՆ, ՍԻՐԱՄԻՆ: ԳՐԻԳՈՐ ԿԱՉՄՈՂ: ԹՎԻՆ: ՋԽ (1491):

Պատուանդանին կայ երկու տող արձանագրութիւն՝ եղծուած. ԵՍ ՓԻՐՂԱ- ԼԱՄՍ ԿԱՆԿԵՑԻ ՔԱՐՄԻՆ, ԲԱԲԻՆ ՉԽԱՉՆ:

Ծանօթութիւն. Ղրիմին անունը հաւանաբար պէտք է վերծանել ՂԱՐԻԲԻՆ ձեւով. փորագրողի սխալի արդիւնք է:

18. Սեւ պատուանդանին փոքր խաչքար՝ քիւրին մէկ տող թերի արձանագրութեամբ. Ս[ՈՒՐ]Բ ԽԱՉՍ ԲԱՐԵՍԱԻՍ...: Քիւրի ներքեւի մասում փորագրուած է թուականը՝ ԹՎ. Ռ /ՄԷ (1608):

Ս[ՈՒՐ]Բ ԽԱՉՍ ԲԱՐԵՍԱԻՍ Է ԱՍԼԻ ՉԱՏԻՆ: ԹՎԻՆ :ՌԺԷ: (1568): (Պատկեր 7):

19. Խաչքարի բեկոր՝ գետնին ընկած, Բարսեղի խաչերից 3 մ հարաւ՝ նոր գերեզմանի դիմաց. քիւրին մէկ տող արձանագրութիւն.

Ս[ՈՒՐ]Բ ԽԱՉՍ ԲԱՐԵՍԱԻՍ Է ԽՈՐԱՄՆԱՉԻՆ ԵՒ ԱՌՈՒԾԻՆ. ՍՏԵՓԱՆՈՍ ԿԱՉՄՈՂ:

20. Նախորդի կողքին, գետնին ընկած խաչքար, ստորին մասում՝ մէկ տող.

Ս[ՈՒՐ]Բ. ԽԱՉՍ ԲԱՐԵՍԱԻՍ ՄԻԽԻ- ԹԱՐ[ԻՆ]:

21. Փոքր օրորոցածեւ տապանաքար՝ գլխի հարթ մասում՝ մէկ տող արձանագրութիւն.

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՄԻՐՉԱՅԾ[Ա]- ՆԻՆ:

22. Խաչքարի բեկոր, նախորդի մօտ՝ արմաւի տակ, երեք տող նօտրգիր.

...ՈՂՈՐՄԻ Վ[Ա]ՂՔԱՆԻԿՆ ԱՄԵՆ: Խաչքարի բեկոր, գետնին ընկած, քիւրին՝ մէկ տող արձանագրութիւն. Ս[ՈՒՐ]Բ ԽԱՉՍ ԲԱՐԵՍԱԻՍ ԾԱՐԻՆ...: Խաչքարի բեկոր՝ գետնին ընկած, նախորդի մօտ, քիւրին՝ մէկ տող արձանագրութիւն. [ՍԲ] ԽԱՉ[Ս] ԲԱՐԵՍԱԻՍ Է ԵՂՍԱԲԵՏ[ԻՆ]: Երկար, մեծ, սեւ տուֆից պատուանդանի առաջին փոսիկի մէջ՝ մեծ խաչքար. Ս[ՈՒՐ]Բ ԽԱՉՍ ԲԱՐԵՍԱԻՍ ՉԱՔԱՐ[ԻԱՅԻ]Ն ԵՒ ՇԱ...:

23. Խաչքար՝ պատուանդանի վրայ, ստորին մասում փորագրուած է թուականը. ԹՎ. ՋԿԴ (1515):

24. Խաչքար՝ գետնին ընկած, քիւրին՝ մէկ տող արձանագրութիւն, թուականը խաչի վերնամասում.

Ս[ՈՒՐ]Բ ԽԱՉՍ ԲԱՐԵՍԱԻՍ ՄՈՒԼ- ԲԱԾԻՆ Է. ԹՎԻՆ ՋԻԱ (1472):

25. Խաչքարի բեկոր՝ գետնին ընկած. Ս[ՈՒՐ]Բ ԽԱՉՍ ԲԱՐԵՍԱԻՍ Է ԿԱՐԱՊԵՏԻՆ ՍԱՌՍԽԱԻ... Խաչի վերնամասի հարթութեան վրայ ունի՝ [ԿԱՉՄ]ՈՂՍ ՅԻԾԵՑԷՔ ԹՎԻՆ ՌԻ (1591):

26. Խաչքար՝ պատուանդանի վրայ, քիւրին՝ մէկ տող արձանագրութիւն.

Ս[ՈՒՐ]Բ ԽԱՉՍ ԲԱՐԵՍԱԻՍ Է ՄԻԽԻ- ԹԱՐԻՆ ԵՒ ՄՈՍԻՆ ՈՐԴԻ...:

27. Մեծ գեղաքանդակ խաչքարի բեկոր, քիւրին՝ մէկ տող եղծուած, թերի արձանագրութեամբ, խաչի վերնամասում՝ քիւրի տակ, ծաղկազիր մակագրութեամբ.

ԱԲԵՂԱ Յ[Ի]Շ[ԵՑԷՔ]:

28. Խաչքարի բեկոր՝ գետնին ընկած, արձանագրութիւնը.

Ս[ՈՒՐ]Բ ԽԱՉՍ ԲԱՐԵՍԱԻՍ Է ԳՈՒԼԻՈՒՄԻՆ...:

29. Խաչքար՝ պատուանդանին կանգնած, ստորին մասում՝ մէկ տող արձանագրութիւն.

ՉԳՐԻԳՈՐ ԿԱՉՄՈՂՍ ԵՒ ԾՆՈՂՍ ՅԻԾԵՑԷՔ⁴⁰:

30. Հարթ տապանաքար՝ չորս տող արձանագրութեամբ.

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ / ՏՐ ՍԱՐԳԻՍԻՍ / ՅԻԾԵՑԷՔ Ի ՔՄ... ..ԹՎԻՆ ՌՀՉ (1626):

31. Գեղաքանդակ զարդամոտիւններով փոքր չափերի տապանաքար երկտող արձանագրութեամբ.

Ս[ՈՒՐ]Բ ԽԱՉՍ ԲԱՐԵՍԱԻՍ Է ՆԱԾՊԷՏ[ԻՆ] [ԵՒ] ԻԻՐ ԾՆՈՂԱՑ:

32. Գեղաքանդակ խաչքար՝ քիւրին մէկ տող եղծուած արձանագրութիւն, խորադիր խաչի վերին գօտում՝ կազմողի անունը.

Ս[ՈՒՐ]Բ ԽԱՉՍ ԲԱՐԵՍԱԻՍ Է ՈՒԼՄԻԾԻՆ ԵՒ ՉԱՐԻՆ / ԵՂԱՐԾԵ Ա[ՍՏՈ- ԻԱ]ԾԱՏ[ՈՒ]ՐԻՆ / Յ[Ի]Շ[ԵՑԷՔ]: ԹՎ: ՋԴ (1455):

33. Խաչքար՝ պատուանդանին կանգնած, քիւրին՝ մէկ տող, խաչի հարթ գօտկատեղին՝ կազմողի անունը.

[ՍՈՒՐԲ] ԽԱՉՍ ԲԱՐԵՍԱԻՍ Է ՄԻԽԻ- ԹԱՐԻՆ ԵՒ ԱՄԻՐ[ԽԱՆԻՆ]: ԹՎ. ՋԺ (1461): (Պատկեր 8):

34. Խաչքար, պատուանդանին կանգնած, քիւրին՝ մէկ տող.

Ս[ՈՒՐ]Բ ԽԱԶՍ ԲԱՐԵԽԱԻՍ Է ԱԿՈ- ԲԻՆ ԵՒ ԱՄՈՒՍՆԻՆ:

35. Խաչքարի բեկոր, քիւիւն՝ երկտող, խառը գրուած արձանագրութիւն:

Ս[ՈՒՐ]Բ ԽԱԶՍ [Բ]ԱՐԵԽԱԻՍ ՄԵԼ- ԲՈՒՄԻՆ [ԵՒ] ՊԱՊԻՆ: ՅՈՎԱՆ / ԷՍ ԿԱԶՍ/Պ ԹԻՇԵՑԷԲ:

36. Մեծ, օրորոցածեւ տապանաքար՝ վերին հարթակին՝ մէկ տող արձանագրու- թիւն:

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ Տ[Է]Ր ԱԻԵՏԻՍԻՆ: ԹՎԻՆ: ՌԺ (1651):

37. Խաչքարի բեկոր, քիւիւն՝ եղծուած, բազմաթիւ կցազրեղով արձանագրութիւն:

[ՍՈՒՐ]Բ ԽԱԶՍ ԲԱՐԵԽԱԻՍ Է ԽԱ- ԶԱՏՈՒՐ[ԻՆ]:

38. Խաչքարի բեկոր, քիւիւն՝ եղծուած արձանագրութիւն:

...ԸՏԾԻՆ ԵՒ ԾՆՈՂԱՑՆ: ՊՂԲ: (1443):

39. Հարթ տապանաքար՝ հինգ տող արձանագրութեամբ:

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ Տ[Է]Ր / ԳԱԼՈՒՍՏԻ- ԿԻՆ, ՀՕՌՕ / ՄԻՆ ԵՒ ԻԻՐ ՈՐԴԻ ԳՐԻ- ԳՈՐԻՆ / ՈՐ ՆԱՀԱՏԱԿԵՑԱՆ ԱՀԱԳ / ԻՆ ԾԱՐԺՄԱՆՆ: ԹՎԻՆ: ՌԺԷ: (1679):

40. Մեծ գեղաքանդակ խաչքարի բազմաթիւ բեկորներ, կտորուած քիւիւն՝ եղծուած մէկ տող արձանագրութիւն, խա- չի վերնամասի հարթութեան վրայ՝ արձա- նագիր պատառիկներ:

Ս[ՈՒՐ]Բ ԽԱԶՍ [ԲԱՐ]ԵԽԱԻ[Ս]... / ԴԱԻ[ԹԻՆ]... [ԴԱ]ՎՐԷԺ ՔԱՂԱՔԻՆ ...ՈՂՈՐՄՈՒԹԻՆ Ի Ք[ՐԻՍՏՈ]ՍՆ:

41. Խաչքար՝ պատուանդանին կանգ- նած, քիւիւն՝ խառը փորագրութեամբ մէկ տող արձանագրութիւն:

[ՍՈՒՐ]Բ ԽԱԶՍ [ԲԱՐ]ԵԽԱԻՍ Է ՅԷ- ՍԱԻՆ ԿՈՂԱԿՑԻՆ ԽԱԹՈՒՆ ԾԱՆԻՆ:

42. Չորս խաչքարեր՝ պատուանդա- նին կանգնած, առաջին երկուսը՝ քիւիւն արձանագրութեամբ:

ա) Ս[ՈՒՐ]Բ ԽԱԶՍ ԲԱՐԵԽԱԻՍ Է ՄԷԼԻՔԲԷԿԻՆ, ՊԱՐՈՆ ԽԱԹՈՒՆԻՆ, ՍԱԼԶԱՐ[ԻՆ]: Խաչի աջ ու ձախ մասե- ռում կազմողի անունն է՝ ՅԱԿՈՒ ԿԱԶ- ՄՈՂ:

բ) [ՍՈՒՐ]Բ ԽԱԶՍ ԲԱՐԵԽԱԻՍ Է: ԱԻԵՏԻՍԻՆ, ԵՂՍԱԲԵԹԻՆ: ԹՎԻՆ ՌԻՆԵ: (1596): ԴԱԻԹ Թ[Ի]Շ[ԵՑԷԲ]: Դաւիթը խաչքարի կազմող քարգործ վարդապետն է:

43. Խաչքար՝ պատուանդանին կանգ- նած, քիւիւն՝ մէկ տող արձանագրութիւն:

Ս[ՈՒՐ]Բ ԽԱԶՍ ԲԱՐԵԽԱԻՍ Է ՎԱԽ- ՏԱՆԳԻՆ, ԿՈՂԱԿՑԻՆ:

44. Խաչքարի բեկոր, քիւիւն՝ մէկ տող եղծուած արձանագրութիւն:

Ս[ՈՒՐ]Բ ԽԱԶՍ ԲԱՐԵԽԱԻՍ Է ԳՐԻԳ[ՈՐԻՆ]:

45. XII-XIII դարերի՝ խոնարհուած ե- կեղեցու փլատակներում խաչքարի բեկոր, երեք տող արձանագրութեամբ (զբաւոր աղբիւրներում եկեղեցու մասին ոչ մի տե- ղեկութիւն յայտնի չէ):

ԹՎ... ԵՍ ՍԱՈՒԾԱ ԾԱՌԱ ԱՅ ԿԱՆԳՆԵՑԻ / ԶԽԱԶՍ ԲԱՐԵԽԱԻՍՈՒԹԻ ԻՆՁ ԵՒ ԾՆՈ / ՂԱՑ ԵՒ ԱՄՈՒՍՆՈ ՊՈՒՈ[ՇՈՅ], ՅԻՇԷ[ՑԷԲ] Ի ՔՄ:

Պոչ անունը փորագրուած է կցազիր ՊՍ տառերի ձեւով, եւ թւում է, թէ Ռ-ն հակառակ է փորագրուած, քանի որ Ս տա- ռի մէջ հորիզոնական մասնիկ (-) կայ:

46. Եկեղեցու աւերակներում չորս սրբատաշ քարեր:

ա) Առաջին քարի վրայի արձանագ- րութիւնը:

ՆՈՐԱ ԱԻԱԳԻՆ ԵՒ / ԱՆԻ: ԵՍ ԲԱՐ- ՍԵՂ / ...ԱՑ ԻՄՈՑՍ ԱՐԱՔԱ / ՏԻԿՆԱ ԵՒ ՄԱԻՐ / ԿՐԵՑԱՔ Ի ՏԱ...

բ) Երկրորդ քարի արձանագրութիւնը:

ԻՐՆ ԾՐԱԳԱԼ[ՈՒՑ] / ԱԳԱԼՈՅՑԻՆ Ա / ՀԱԿԱՌԱԿ ԿԱՆ...:

գ) Երրորդ քարի արձանագրութիւնը:

ՆԵՆԷ ԲՈՊԻՆ Ա... / ՅԱՅՏՆՈՒԹԵՆ Ծ.../ԷԿԵՂԷՑՈՅՍ ԵՒ ՈՐ...41:

դ) Չորրորդ քարը փոքրիկ է, երեք տող իրար տակ գրեր:

...ՅՑ / ...ՄԱ / ...ԳՐԵ: Առանձին տո- ղով՝ ԱԾ ՈՂՈՐՄԻ: Հաւանական է, որ 2- ըրդ քարը 3-րդի շարունակութիւնն է. «ՆԷ- ԱԷ Բուպահն ...ըն ճրագալ[ոյց]... յայտնու- թեան ճրագալոյցին զԷկեղեցոյս եւ որ հակա- նակ կան...»:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ


- 1 Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ-Ս. Ղազար, 1890, էջ 294:
- 2 Գ. Յովսէփեան, Խաչքարեանք կամ Պոչեանք հայոց պատմութեան մէջ, հտ. Գ, Նիւ Եօրք, 1942-1943, էջ 31: Կ. Ղաֆադարեան, Սանահնի վանքը եւ ճրագալագրութիւնները, Երեւան, 1957, էջ 129, Դիւան հայ վիմագրութեան, պրակ 4, կազմեց Ս. Գ. Բարխուդարեանը, Երեւան, 1973, էջ 69:
- 3 Հր. Աճառեան, Հայերէն արմատական բառա- րան, հտ. Ա, Երեւան, 1971, էջ 258:
- 4 Ս. Սաղումեան, Փակագրութիւնը հայ վիմագրու- թեան մէջ. «Լրաբեր հաս. գիտ.», 1980, թիւ 3, էջ 78-79: Քարգործ վարպետի անունը Ս. Բարխու- դարեանը վերծանել է Մանվել (Ս. Բարխուդա- րեան, Միջնադարեան հայ ճարտարապետներ եւ քարգործ վարպետներ, Երեւան, 1963, էջ 149): Իրականում՝ վերջը ճշուած անունը է հնչիւնի գրութեամբ է:
- 5 Ս. Սաղումեան, Գ. աշխ., էջ 78:
- 6 Ս. Սաղումեան, Գ. աշխ., էջ 78:
- 7 Ս. Սաղումեան, Գ. աշխ., էջ 78:
- 8 Գ. Յովսէփեան, Խաչքարեանք կամ Պոչեանք հայոց պատմութեան մէջ, մաս Ա, Վաղարշա- պատ, 1928, էջ 165:
- 9 Ս. Բարխուդարեան, Գ. աշխ., էջ 148:
- 10 Ակնարկ հայ ճարտարապետութեան պատմու- թեան, Երեւան, 1964, էջ 28:
- 11 Ս. Աւագեան, Վիմակալ արձանագրութիւնների հնչիւնաբանութիւն, Երեւան, 1973, էջ 110:
- 12 Դիւան հայ վիմագրութեան, պրակ 1, կազմեց Յ. Ա. Օրբէլին, Երեւան, 1966, էջ 1:
- 13 Հր. Աճառեան, Հայոց անձնանունների բառա- րան, հտ. Ա, Երեւան, 1942, էջ 327-328:

- 14 Տե՛ս Ս. Սաղումեան, Գ. աշխ., էջ 78-79:
- 15 Ս. Սաղումեան, Ծածկագրութիւնը եւ զարդա- րուեստը հայ վիմագրութեան. «Լրաբեր հաս. գիտ.», 1979, թիւ 9, էջ 71:
- 16 Բուպահնում մասին տե՛ս ստորեւ, ծան. 41:
- 17 ԺԵ դարերի հայերէն ձեռագրերի յիշատակա- րաններ, մաս Բ (1451-1480 թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկեանը, Երեւան, 1958, էջ 396-397:
- 18 Նոյն տեղում, էջ 420:
- 19 ԺԵ դարերի հայերէն ձեռագրերի յիշատակա- րաններ, մաս Գ (1481-1500 թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկեանը, Երեւան, 1967, էջ 200:
- 20 Նոյն տեղում, էջ 200:
- 21 Նոյն տեղում, էջ 228-230:
- 22 Նոյն տեղում, էջ 227:
- 23 Նոյն տեղում, էջ 281:
- 24 Ս. Սաղումեան, Փակագրութիւնը հայ վիմագրու- թեան մէջ, էջ 73: Թուակալը վերակազմում ենք՝ ըստ Մ. Սմբատեանի (Տեղագիր Գեղարքու- մի Ծովագարոյ գաւառի, Վաղարշապատ, 1895, էջ 247) եւ Ս. Սաղումեանի (Ծածկագրութիւնը եւ զարդարուեստը հայ վիմագրութեան, էջ 68):
- 25 ԺԷ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարան- ներ (1601-1620 թթ.), մաս Ա, կազմեց Կ. Յակո- բեանը եւ Ա. Յովհաննիսեանը, Երեւան, 1974, էջ 55:
- 26 Նոյն տեղում, էջ 98:
- 27 Նոյն տեղում, էջ 237:
- 28 ԺԷ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարան- ներ (1621-1640 թթ.), մաս Բ, Երեւան, 1978, էջ 225:
- 29 Նոյն տեղում, էջ 225:
- 30 ԺԷ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարան- ներ (1641-1660 թթ.), մաս Գ, կազմեց Վ. Յակո- բեանը, Երեւան, 1984, էջ 386:
- 31 Նոյն տեղում, էջ 585:
- 32 Գ. Կարախանեան, Դիտողութիւններ 12-րդ դա- րի երկու յուշարձան-կոթողի մասին, ՊԲՀ, 1975, թիւ 4, էջ 125-128:
- 33 Հր. Աճառեան, Հայոց անձնանունների բառա- րան, հտ. Գ, Երեւան, 1948, էջ 99: Ղ. Ալիշան, Ծիրակ, Վենետիկ-Ս. Ղազար, 1881, էջ 141:
- 34 Ս. Սաղումեան, Փակագրութիւնը հայ վիմագրու- թեան մէջ, էջ 73:
- 35 Նոյն տեղում, էջ 77:
- 36 Ա. Ծախիսեան, Հայաստանի միջնադարեան կո- թողային յուշարձանները. IX-XIII դարերի խաչ- քարերը, Երեւան, 1984, էջ 40:
- 37 Հր. Աճառեան, Հայոց անձնանունների բառա- րան, հտ. Ա, էջ 396:
- 38 Հր. Աճառեան, Հայոց անձնանունների բառա- րան, հտ. Բ, Երեւան, 1973, էջ 81:
- 39 Ս. Սաղումեան, Ծածկագրութիւնը եւ զարդա- րուեստը հայ վիմագրութեան, էջ 71:

40 Ս. Սաղումեան, Ծածկագրութիւնը եւ զարդարուեստը հայ վիմագրերում, էջ 71:

41 Բուս-Բուրայ-Բուպակ անունը յայտնի է նաեւ Ա-նիցի մատուռ եկեղեցու արձանագրութիւնից (տե՛ս վերեւում, ծան. 16):

ՊԱՏԿԵՐՆԵՐ




Պատկեր 1



Պատկեր 2



Պատկեր 3



Պատկեր 4



Պատկեր 5



Պատկեր 6



Պատկեր 7



Պատկեր 8